ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ՀՀ-ԲՆ-ԾՁԲ-17/04»

ք. Երևան «17» «02» 2017 թ.

ՀՀ բնապահպանության նախարարությունը, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավարի ժ/պ Հ.Հովհաննիսյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ «Պատվիրատու»), մի կողմից, և Անդրանիկ Ղուլիջանյանը (անձնագիր AH0342186, տրված 03.03.2007թ., 047 կողմից, այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **«Սևանա լճի ջրածածկ անտառտնկարկների մաքրման 2017 թվականի ծրագրի իրականացման համար անտառների գույքագրման» ծառայությունների մատուցման** պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող Հավելված №1-ով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2. Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի Հավելված №1-ով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1. Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2. Եթե կատարվել է սույն պայմանագրի Հավելված №1-ում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի Հավելված №1-ով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2. Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1. Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2. Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3. Կատարողն իրավունք ունի՝

2.3.1. Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4. Կատարողը պարտավոր է՝

2.4.1. Սույն պայմանագրի Հավելված №1-ով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարի ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2. Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3. Սույն պայմանագրի գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4. Սույն պայմանագրի 1.1 կետով նախատեսված ծրագրի իրականացման ընթացքում անհամապատասխանությունների առաջանալու դեպքում՝ իր հաշվին և իր միջոցներով վերացնել դրանք:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1. Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված №3) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված №3.1): Սույն կետով նախատեսված պայմանի խախտումը համարվում է Ծառայության մատուցման ժամկետի խախտում:

3.2. Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3. Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4. Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է **400000 (չորս հարյուր հազար) ՀՀ դրամ**: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2. Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի Հավելված №2-ով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 2017 թվականի դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2. Սույն պայմանագրի Հավելված №1-ում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3. Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4. Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5. Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6. Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7. Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1. Սույն պայմանագրի պայմանները տարածվում են 2017 թվականի հունվարի 9-ից կողմերի միջև ծագած հարաբերությունների վրա և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Սույն պայմանագիրը կնքվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի հիմքով՝ պայմանով, որ դրա շրջանակներում գնում կարող է կատարվել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում: Սույն մասի համաձայն կնքված պայմանագիրը լուծարվում է, եթե պայմանագրի կատարման համար համապատասխան իրավական ակտով ֆինանսական միջոցները չեն նախատեսվել: Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

7.2. Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3. Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.4. Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

7.5. Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.6. Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Կատարողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.7. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.8. Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երեք օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի Հավելվածներ №№ 1; 2; 3 և 3.1-ը հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.9. Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.10. Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	***ԿԱՏԱՐՈՂ***
ՀՀ բնապահպանության նախարարություն	Տավուշի մարզ, գ.Կողբ
ք.Երևան, Կառավարական 3-րդ շենք	«Արդշինբանկ» ՓԲԸ
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	ՀՀ 2478100041400050
ՀՀ 900011007763	սոցապ քարտ 3311480066
ՀՎՀՀ 02507198	անձնագիր AH0342186,
ՀՀ բնապահպանության նախարարության	տրված 03.03.2007թ., 047 կողմից
աշխատակազմի ղեկավարի ժ/պ	
Հ.Հովհաննիսյան	***Ա.Ղուլիջանյան***
_____	_____
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.S.	**Ա.S.**

Հավելված №1
«17» «02» 2017թ. կնքված
N «ՀՀ-ԲՆ-ԾՁԲ-17/04» ծածկագրով գնման պայմանագրի

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ բնապահպանության նախարարություն	
ք.Երևան, Կառավարական 3-րդ շենք	Տավուշի մարզ, գ.Կողբ
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Արդշինբանկ» ՓԲԸ
ՀՀ 900011007763	ՀՀ 2478100041400050
ՀՎՀՀ 02507198	սոցապ քարտ 3311480066
ՀՀ բնապահպանության նախարարության	անձնագիր AH0342186,
աշխատակազմի ղեկավարի ժ/պ	տրված 03.03.2007թ., 047 կողմից
Հ.Հովհաննիսյան	***Ա.Ղուլիջանյան***
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

«Սևանա լճի ջրածածկ անտառտնկարկների մաքրման 2017 թվականի ծրագրի իրականացման համար անտառների գույքագրման» ծառայությունների մատուցման

1.	Մատուցման ենթակա Ծառայության համառոտ բնութագիրը	«Սևան» ազգային պարկի Վարդենիսի մասնաճյուղի ափամերձ՝ մինչև 1901.5 մ ծովի մակերևույթից բարձր մակարդակում 2017 թվականի համար մաքրման տարածքների չափագրում, քարտեզագրական նյութերի, ծավալաթերթերի և նախահաշիվների ամբողջական փաթեթի պատրաստում: Գույքագրված տվյալների թարմացում Սևանա լճի ընտրված ափամերձ տարածքների և դրանց ճշգրտված սահմանների վերաբերյալ՝ ՀՀ կառավարության կողմից հաստատվող 2017 թվականի համար Սևանա լճի ջրածածկ և ափամերձ տարածքների մաքրման համապատասխան ծրագրի իրականացնելու համար: Մանրամասն դաշտային գույքագում «Սևան» ազգային պարկի Վարդենիսի մասնաճյուղի Ծովակի և Վարդենիսի տեղամասերի ջրածածկ և ափամերձ լճի մակերևույթից մինչև 1,5 մետր բարձրության տարածքներում: Սևան Ազգային պարկի Վարդենիսի մասնաճյուղի ուսումնասիրման նախատեսած տարածքում իրականացնել մինչև 1901,5մ ծմբ առափնյա տարածքների մանրամասն ուսումնասիրություն և գնահատում, ներառյալ՝ • Իրականացնել վերգետնյա բուսականության, ներառյալ կոճղերի/արմատների դաշտային գույքագրում՝ որոշելու բուսականության տեսակները, տեսակային բազմազանությունը և դրանց բաշխումը տարածքներում, ներառյալ նաև ջրածածկ և նախկինում մաքրված տարածքները՝ առկա տվյալներում հիմնական բացթողումները բացահայտելու համար: • Հիմնական բուսականության տեսակների և դոմինանտ տեսակների որակական և քանակական գնահատում, առկա որակները և քանակները (վառելափայտ, ջախ, կոճղեր/արմատներ, շինափայտ և այլն): • Մաքրված անտառանյութի և արմատային մասսայի տեղափոխման համապատասխան տարածքի ընտրություն՝ համաձայնեցնելով «Սևան» ազգային պարկի հետ: • «Սևան» ազգային պարկի ընտրված Վարդենիսի մասնաճյուղի համար մշակել թվայնացված քարտեզների շերտեր, որոնք պետք է ներառեն հիմնական հողատարածքների վերաբերյալ տվյալներ (անտառապատ, մաքրված, ջրածածկ, ճահճապատ և այլն), բուսականության տեսակները և տեսակների բաշխումը, տարածքների նոր թվայնացված քարտեզները՝ թարմացված տվյալների բազայով ներառյալ վերոնշյալ շերտերը; Հիմք ընդունելով գույքագրման թարմացված տվյալները՝ մշակել «Սևան» ազգային պարկի Վարդենիսի մասնաճյուղ մինչև 1901.5մ ծմբ ջրածածկ և առափնյա տարածքների մաքրման տեխնիկական նախագծի փաստաթղթերի փաթեթը՝ համապատասխան ազգային նորմերի և կանոնակարգերի 2017թ.-ին իրականացվելիք ՀՀ կառավարության Սևանա լճի առափնյա տարածքների մաքրման ծրագրի շրջանակներում, ներառյալ՝ • Գծագրերի մշակում և գործողությունների մանրամասն նկարագրություն անտառահատումների, մաքրման, մասնատման, կուտակման և տեղափոխման համար: • Ըստ տարածքի (հա) և ըստ ծավալի ($մ^3$) որոշակիացված գործողությունների յուրաքանչյուր քառակուսու համար մշակել մանրամասն ծավալաթերթեր:
2.	Այլ պահանջներ	Փաստաթղթերի մշակում էլեկտրոնային տարբերակով:
3.	Ծառայության մատուցման սկիզբը	09.01.2017 թվական
4.	Ծառայության մատուցման ավարտը	31.03.2017 թվական

Հավելված №2
«17» «02» 2017թ. կնքված
N «ՀՀ-ԲՆ-ԾՁԲ-17/04» ծածկագրով գնման պայմանագրի

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ բնապահպանության նախարարություն	
ք.Երևան, Կառավարական 3-րդ շենք	Տավուշի մարզ, գ.Կողբ
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Արդշինբանկ» ՓԲԸ
ՀՀ 900011007763	ՀՀ 2478100041400050
ՀՎՀՀ 02507198	սոցապ քարտ 3311480066
ՀՀ բնապահպանության նախարարության	անձնագիր AH0342186,
աշխատակազմի ղեկավարի ժ/պ	տրված 03.03.2007թ., 047 կողմից
Հ.Հովհաննիսյան	***Ա.Ղուլիջանյան***
_____	_____
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	**Կ.Տ.**

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

N	Ծառայության անվանումը	**Ֆինանսավորումը Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեից, ընդ որում (ըստ ամիսների աճողական կարգով)՝**												
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
1.	Սևանա լճի ջրածածկ անտառտնկարկների մաքրման 2017 թվականի ծրագրի իրականացման համար անտառների գույքագրման ծառայություններ	-	-	-	400 000	400 000	400 000	400 000	400 000	400 000	400 000	400 000	400 000	**400 000**
	ԸՆԴԱՄԵՆԸ	-	-	-	**400 000**	**400 000**	**400 000**	**400 000**	**400 000**	**400 000**	**400 000**	**400 000**	**400 000**	**400 000**

Հավելված №3
«17» «02» 2017թ. կնքված
N «ՀՀ-ԲՆ-ԾՁԲ-17/04» ծածկագրով գնման պայմանագրի

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ բնապահպանության նախարարություն	Անդրանիկ Ղուլիջանյան
ք.Երևան, Կառավարական 3-րդ շենք	Տավուշի մարզ, գ.Կողբ
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Արդշինբանկ» ՓԲԸ
ՀՀ 900011007763	ՀՀ 2478100041400050
ՀՎՀՀ 02507198	սոցապ քարտ 3311480066

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«_____» «_____» *2017թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ ***Պետության կարիքների համար ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագիր***
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «17» «02» 2017 թ.
Պայմանագրի համարը՝ ՀՀ-ԲՆ-ԾՁԲ-17/04
Պատվիրատուն՝ ի դեմս ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի Կենսառեսուրսների կառավարման գործակալության պետ Ա.Հովհաննիսյանի և Կատարողն՝ ի դեմս Անդրանիկ Ղուլիջանյանի (անձնագիր AH0342186, տրված 03.03.2007թ., 047 կողմից), հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 2017 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված Ծառայությունը համապատասխանում է Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Կատարողը մատուցել է հետևյալ Ծառայությունը՝

N	Մատուցված ծառայության							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ Ծառայության մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված №3.1
«17» «02» 2017թ. կնքված
N «ՀՀ-ԲՆ-ԾՁԲ-17/04» ծածկագրով գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ՀՀ բնապահպանության նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) և Անդրանիկ Ղուլիջանյանի (անձնագիր AH0342186, տրված 03.03.2007թ., 047 կողմից, այսուհետև՝ Կատարող) միջև «17» «02» 2017 թվականին կնքված N ՀՀ-ԲՆ-ԾՁԲ-17/04 գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը «___» «_____» 2017 թվականին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունը.

Ծառայության		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն